

ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ ՄԻ ԶԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Նախքան մասնագիտական բառապաշարի յուրացման դժվարություններին անդրադառնալը՝ քննարկենք (յուրացման օբյեկտ) հասկացությունը :

Բառի յուրացման օբյեկտ ասելով հասկանում ենք՝

- բառեր.
- կայուն բառակապակցություններ.
- դարձվածաբանական միավորներ:

Մեթոդական և հոգեբանական առումով վերոհիշյալ լեզվական տարբեր միավորները պետք է յուրացվեն որպես մեկ ամբողջություն՝ հաշվի առնելով դրանց իմաստը, կառուցվածքը և գործածությունը (Վ.Ա. Բուխրինդեր, 1984թ., էջ 46):

Բառապաշարային միավորների և ուսուցման խնդիրների ճշգրտումը թույլ է տալիս սկզբունքորեն ճիշտ կազմակերպել բառապաշարի շուրջ տարվող աշխատանքները սկսած միջնակարգ դպրոցից: Գլխավոր նպատակը բառերի, կայուն բառակապակցությունների և գործածական արտահայտությունների ռեցեպտիվ և պրոդուկտիվ տիրապետումն է, ինչպես նաև օտար լեզվով ընթերցանության ընթացքում կռահման մեխանիզմների զարգացումը:

Լեզվական կռահումը անձանոթ բառի իմաստի ինքնուրույն ընկալումը և իմաստավորումն է: Դասավանդման մեթոդիկայում լեզվական կռահում ասելով սովորաբար հասկանում ենք.

1. Ներգոր (պոտենցիալ)՝ բառապաշարի ընդլայնման և ձևավորման այնպիսի միջոց, որը թույլ է տալիս խոսքաշարի և բառի կառուցվածքաիմաստային առանձնահատկությունների հիման վրա բացատրել բառիմաստը:

2. Անձանոթ միավորների իմաստավորում, որը կարելի է համեմատել պորբլեմային իրադրության պայմաններում խնդրի լուծման հետ, որտեղ տրամաբանական վերակերպման օրինաչափություններից, այսինքն՝ բառակազմական վերլուծությունից բացի դրսևորվում են նաև ներըմբռնողական մտածողության օրինաչափությունները:

Շատ կարևոր է հիշել նաև, որ բառի յուրացումը կատարվում է հնչյունական և քերականական նյութի յուրացմանը զուգահեռ: Լեզվի բոլոր կողմերի, այդ թվում նաև բառապաշարի յուրացման հետ կապված դժվարու-

թյունների հաղթահարման համար արդյունավետ է բառերի յուրացումն ու մշակումը խոսքային նմուշներում:

Բառապաշարային միավորն օժտված է միասնականությամբ, իմաստի, ձևի և գործածության ներդաշնակությամբ: Այս գլխավոր դրույթից բխում է բառապաշարային միավորները տարբեր տեսանկյունից բնորոշող բոլոր հատկանիշները ուսուցման ընթացքում հաշվի առնելու անհրաժեշտությունը:

Բառածև ասելով առաջին հերթին հասկանում ենք «հնչող մատերիան», այսինքն՝ բառի՝ լսողությամբ յուրացվող ծայնային պատյանը: Լսողական ընկալման հիման վրա ձևավորվում է հնչող բառի հոգեբանական պատկերացում-կերպարը, որը բառի ընկալմանն ու վերարտադրությանը մասնակցող կողմերից մեկն է: Գրավոր խոսքում բառը հանդես է գալիս գրաֆիկական տեսքով, որը հաճախ չի համապատասխանում հնչյունային պատկերին: Բառապաշարի ուսուցման ընթացքում պետք է նկատի ունենալ ոչ միայն քննվող միավորների արտասանության և գրության, այլ նաև քերականական և կառուցվածքային առածնահատկությունները: Վերը նշվածի հետ սերտորեն կապված է երրորդ բաղադրիչը՝ բառի յուրացման նպատակով խոսքաշար-ծական պատկերների ստեղծումը:

Բառի իմաստային կողմն ապահովում է նրա ընկալումն ու գործածությունը, որի ընթացքում ամրակայվում է առարկան կամ երևույթն անվանող բառի հոգեբանական պատկերացումը: Բառի (բառապաշարային միավորի) գոյությունը և նրա գործածությունը որոշվում են նրա ձևի և բովանդակության միասնությամբ: Ընդ որում, բառի յուրաքանչյուր դրսևորում ենթակա է փոփոխման: Բառի կիրառման ոլորտում սովորաբար առանձնացվում է հարացույցային համադրություն (բառաթեքում) և շարակարգային բառակապակցություն:

Ինչպես նշում է Ի. Լ. Բիմը, բառը կարող է տարբեր կապեր դրսևորել հասկացության հետ, մայրենի լեզվի համարժեք բառի հետ, այլ բառերի հետ և այլն:

Այսպիսով՝ բառին բնորոշ են նաև «արտաքին» հատկանիշներ, օրինակ՝ այլ բառերի հետ զուգորդվելու կարողություն, որի շնորհիվ ստեղծվում են բառակապակցություններ, շարույթներ և դարձվածքներ: Բառակապակցությունը բառապաշարի ուսուցման կարևորագույն մասն է, որը պետք է հաշվի առնել նոր նյութը ներմուծելիս: Վ. Բուխթինդերը ներկայացնում է բառապաշարային գիտելիքների տեսակները՝ ելնելով բառապաշարային միավորներին բնորոշ հատկություններից:

Ըստ Բուխբինդերի՝ սրանք են բառապաշարային գիտելիքները.

- ինչյունաբանական գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են բառապաշարային միավորների արտասանական-ընկալողական պատկերների զարգացման համար.
- գրաֆիկական և ուղղագրական գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են տեսողական գրաֆիկական բառային պատկերների միջոցով բառեր գրելու և դրանք տեքստում ճանաչելու համար.
- քերականական գիտելիքներ, որոնք վերաբերում են բառածևի ստեղծմանը.
- ուսումնասիրվող բառապաշարային միավորների իմաստին առնչվող գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են բառակապակցություններ կազմելու համար.
- օտար լեզվում տվյալ բառերի զուգորդման կանոններին վերաբերող գիտելիքներ, որոնք երբեմն չեն համընկնում մայրենի լեզվում եղածներին և դրանով դժվարացնում են բառի օգտագործումը:

Հաշվի առնելով Վ.Ա. Բուխբինդերի տեսությունը՝ կարելի է տարբերակել.

ա) կոնկրետ նշանակությամբ բառեր ըստ առարկայական պատկանելության.

բ) վերացական նշանակությամբ բառեր (այդ բառերը մեծ մասամբ բազմիմաստ են և դրանք հասկանալու համար որոշակի ջանքեր են պահանջվում):

գ) գերազանցապես գործառական նշանակությամբ բառեր, որոնք իմաստային թույլ տարողություն ունեն: Այդ բառերը գործածվում են մեծ մասամբ բառակապակցություններում, ինչպես օրինակ *setzen, tun, machen, in Betrieb setzen*.

դ) կառուցվածքային (կոնստրուկտիվ) բառեր, որոնք զուրկ են ինքնուրույն բառային իմաստից, դրանք հիմնականում սպասարկու բառերն են:

Վերջին դեպքում սովորողի համար դժվար է լինում բառի կառուցվածքային գործառույթի ընկալումը (Վ.Ա. Բուխբինդեր, 1970թ., էջ 24):

Որոշ բառեր հեշտ են հիշվում և արագ ընկալվում, որոշ բառերի յուրացումը ժամանակ և ջանք է պահանջում: Հետևաբար նույնը չեն տարբեր բառերի մտապահման և կիրառման դժվարությունները: Այս հանգամանքը դեռ քիչ է ուսումնասիրված և հաճախ հաշվի չի առնվում ուսուցման ընթացքում, հաճախ բառերը և այլ բառապաշարային միավորները ներմուծվում են առանց հաշվի առնելու բառապաշարային դժվարությունների աստիճանն ու բնույթը:

Հայտնի են բառերի յուրացման դժվարության տարբեր եղանակներ: Օրինակ, Վ.Ա. Բուխբինդերը՝ տալիս է բառերի յուրման դժվարության համար հատուկ կարգի խմբավորում՝ ըստ յուրացման դժվարությունների քանակական և որակական ցուցանիշների, այսպես՝

1. արտասանական դժվարություններ, օրինակ՝ befürchten, die-See
2. գրության դժվարություններ օրինակ՝ ziehen, äußern
3. իմաստի հետ կապված դժվարություններ.

ա) բազմիմաստ բառերն ավելի դժվար են յուրացվում, քան մենիմաստները.

բ) վերացականներն ավելի դժվար են յուրացվում, քան նյութականները.

գ) փոխաբերական իմաստ ունեցող բառերն ավելի դժվար են յուրացվում, քան ուղղակի իմաստ ունեցողները.

դ) մասնակիորեն կամ ամբողջովին իրենց մշակութային կորցրած սպասարկու բառերն ավելի դժվար են յուրացվում, քան վառ արտահայտված իմաստ ունեցողները:

Թվարկված գործոնները հաշվի առնելով՝ հնարավոր է դառնում որոշել բառապաշարային միավորին բնորոշ մշտական հատկություններով պայմանավորված դժվարությունները: Բայց դժվարությունը կարող է փոփոխվել, եթե տվյալ միավորը, տարբեր համատեքստերում հայտնվում է իր ընկալման համար նպաստավոր կամ աննպաստ պայմաններում: Այսպես, եթե ներմուծվում են հնչողությամբ նման բառեր, հնարավոր են փոխներթափանցման դեպքեր: Օրինակ՝ kennen-können, lernen-lehren, leiten-leiden, der Leiter-leider.

Բառապաշարի ուսուցման հարցում էական են նյութի ընտրությունը, դասակարգումը և մեթոդական տիպականացումը: Վերջինս հիմք է ծառայում նյութի ներմուծման, ամրապնդման, ինչպես նաև հմտությունների ու կարողությունների զարգացման համար:

Օգտագործված գրականության ցանկ.

1. Бухбиндер В.А. Вопросы обучения лексике. Журн. "Иностранные языки в школе", 1972, №6
2. Леман-Абрикосов Г.А. Обучение немецкой лексике. Учпедгиз. М., 1958
3. Леман-Абрикосов Г.А. Вскрытие внутреннего образа слова как путь овладения лексикой. Журнал "Иностранные языки в школе" 1963, №3
4. Мишеа Р. Словари основной лексики. Сб. Методика преподавания иностранных языков за рубежом., ч.1, Изд-во "Прогресс", М., 1967